ՀԱՄԱԿԱՐԳԱԿ

BookMark

PAOLO GIORDANO

NEL CONTAGIO

BookMark

ՊԱՈԼՈ ՋՈՐԴԱՆՈ

ՀԱՄԱԿԱՐԿ

COVID-19-Ը, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Թարգմանությունն իտալերենից՝
Ջեննի Ֆիլյանի

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 821.131.1-4 Ջորդանո
ԳՄԴ 84(4Իտ)-4
Ջ 850

Ջ 850 Ջորդանո Պաոլո
Համավարակ / Պաոլո Ջորդանո.- Եր.: Newmag, 2021.- 144 էջ:

Covid-19-ի համավարակն ամենակարևոր առողջապահական արտակարգ վիճակն է: Իտալացի ֆիզիկոս և գրող Պաոլո Ջորդանոն մեկ գրքում համառոտ ներկայացնում է մերօրյա գերկապակցված աշխարհում վիրուսի տարածումը՝ ինչու է այն կարևոր, ինչպես է ազդում մեզ վրա ու ինչպես պետք է արձագանքել: Ջորդանոն վիրուսի տարածումը կապում է կեղծ լուրերի, բնապահպանական ճգնաժամի, ազգայնականության ու քսենոֆոբիայի հետ, երբ մարդիկ պատկերացում չունեն նոր տեսակի գլոբալ համայնքի մասին: Իրատեսական, խիստ ու ոգեշնչող այս գիրքը բոլոր նրանց համար է, ովքեր ուզում են հասկանալ, թե ինչպես հայտնվեցինք այնտեղ, որտեղ հիմա ենք, և ուր ենք գնալու:

Գրքում ներառված են հրեա պատմաբան և փիլիսոփա Յուվալ Նոյ Հարարիի՝ կորոնավիրուսի մասին երկու հոդվածները:

ՀՏԴ 821.131.1-4 Ջորդանո
ԳՄԴ 84(4Իտ)-4

ISBN 978-9939-884-10-3
Պաոլո Ջորդանո, «Համավարակ» © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ
Paolo Giordano, “Nel contagio” © 2020 Giulio Einaudi editore

This edition published in agreement with the Proprietor through MalaTesta Literary Agency, Milan. The Author will donate part of his royalties to medical research charities and to those working to cure the infected.

«Համավարակ» գրքի թարգմանությունն իրականացվել է MalaTesta (Միլան, Իտալիա) գրական գործակալության հետ կնքված պայմանագրով: Պաոլո Ջորդանոն հեղինակային իր վճարի մի մասը փոխանցելու է բժշկական հետազոտությունների իրականացմանը և նրանց, ովքեր բուժում են վարակվածներին:

Յուվալ Նոյ Հարարիի հոդվածների թարգմանությունն իրականացվել է հեղինակի գրասենյակի թույլտվությամբ:

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Հայերեն հրատարակության իրավունքը ձեռք է բերվել ԱՐԻ գրական գործակալության միջոցով:

Բովանդակություն

1 Հտրվել վախերին 7

2 Տաղտկալի օրեր 11

3 Վարակի մաթեմատիկան 15

4 R_0 19

5 Այս խենթ, ոչ գծային աշխարհում 23

6 Կանգնեցնել վարակը 27

7 Մաղթելով լավագույնը 31

8 Իսկապես կանգնեցնել վարակը 35

9 Խոհեմության մաթեմատիկան 39

10 Ձեռք-ոտք-բերան 43

11 Կարանտինի երկընտրանքը 47

12 Ընդդեմ ֆատալիզմի 51

13 Կրկին ընդդեմ ֆատալիզմի 55

14 Ոչ ոք կղզիացած չէ 59

15 Թռչել 61

16 Քաոս 65

17 Շուկայում 69

18 Սուպերմարկետում 73

Bookmark

19 **Տեղաշարժեր** 77

20 **Շատ հեշտ մարգարեություն** 81

21 **Անձրևում է արևի հետ** 85

22 **Մակաբույծներ** 89

23 **Փորձագետներ** 93

24 **Վերազգային կորպորացիաները** 97

25 **Մեծ պարիսպը** 101

26 **Պան աստվածը** 105

27 **Հաշվել օրերը** 101

Յուվալ Նոյ Հարարի / Աշխարհն ու կորոնավիրուսը
հոդվածաշար 115

Աշխարհը կորոնավիրուսից հետո 117

Կորոնավիրուսի դեմ պայքարում մարդկությունն
առաջնորդ չունի 131

BookMark

1

•

Հորվել վախերին

BookMark

Կորոնավիրուսի համավարակը ծանրագույն արտակարգ իրավիճակ է ստեղծել առողջապահության բնագավառում: Սա ո՛չ առաջինն է, ո՛չ վերջինը և թերևս ո՛չ էլ ամենասարսափելին: Այս համավարակի զոհերն ընդհանուր առմամբ գուցե լինեն նույնքան, որքան նախորդ վարակների ժամանակ, բայց այս մեկը երեք ամսում արդեն ռեկորդ է սահմանել: Sars-Cov-2-ն առաջին նոր վիրուսն է, որը շատ արագ է դրսևորվում աշխարհի մասշտաբով: Մյուսները՝ սրան շատ նման, արագորեն ջախջախվեցին, ինչպես նախորդ Sars-Cov-ը: Որոշները, օրինակ՝ ՄԻԱՎ-ը, թաքնվել են ստվերում և տարիներ շարունակ դավեր են նյութում: Sars-Cov-2-ն ավելի հանդուգն գտնվեց: Եվ դրա հանդգնությունը բացահայտում է մի բան, որը մենք նախկինում գիտեինք, բայց թերագնահատում էինք. մեզ ամենուր միմյանց կապող մակարդակներն այնքան շատ են, մեզնով լցված աշխարհն այնքան բարդ է՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, նաև միջանձնային ու հոգեբանական կառուցվածքներով:

Ես սա գրում եմ փետրվարի 29-ին. այս օրը միայն նահանջ տարում է լինում, շաբաթ է: Հաստատված վարակվածների

որում հայտնվել են շատերը. մենք ապրում ենք առօրյա կյանքի կասեցման մի ժամանակահատված, ռիթմի ընդհատում, որը երբեմն պատահում է երգերում, որտեղ հարվածային գործիքները կտրուկ դադար են տալիս, և երաժշտությունը կարծես ընդլայնվում է: Փակ դպրոցներ, երկնքում մի քանի օդանավ, մենավոր և արձագանքող քայլեր թանգարանների միջանցքներում, ամենուր սովորականից ավելի լուռ է:

Ես որոշեցի այս դատարկությունն օգտագործել: Ու սկսեցի գրել: Գրելը երբեմն օգնում է, որ չտրվես մտատանջումներին: Գրելիս կարծես խարիսխ ես նետում նավահանգստում, ու ծանր խոհերի քամիները քեզ չեն քշում խռովված ծովի խորքը: Բայց մի այլ պատճառ էլ կա. ես չեմ ուզում կորցնել մեզ վերաբերող ճշմարտության այն հատվածը, որը բացահայտվում է համաճարակի ժամանակ: Երբ այս մղձավանջն ավարտվի, և մեր վախերը մնան հետևում, մեր կարևոր խոհերն ու լուրջ մտադրություններն էլ կմոռացվեն. հիվանդություններից հետո միշտ այդպես է լինում:

Երբ կարդաք այս էջերը, իրավիճակը փոխված կլինի, թվերը տարբեր կլինեն, համաճարակն ավելի տարածված կլինի՝ հասնելով քաղաքակիրթ աշխարհի յուրաքանչյուր անկյուն, կամ սանձված կլինի: Բայց դա կարևոր չէ: Որոշակի խորհրդածումներ, որոնք վարակն այժմ արթնացնում է, դեռևս ուժի մեջ կլինեն: Քանի որ այն, ինչ տեղի է ունենում, սոսկ դժբախտ դեպք չէ, ոչ էլ պատուհաս: Եվ ամենևին էլ նոր բան չէ: Այս ամենը եղել է նախկինում և կլինի կրկին:

2

•

Տաղտկալի օրեր

BookMark

Ավագ դպրոցում ցերեկներն անցկացնում էի հանրահաշվի հավասարումներ պարզեցնելով: Գրքից արտագրում էի թվերի ու նշանների երկար շարքերը, այնուհետև քայլ առ քայլ կրճատում էի դրանք՝ հասցնելով հակիրճ և հասկանալի արդյունքի՝ 0, -1/2, a2: Պատուհանից այն կողմ մթնում էր, բնապատկերը փոխվում էր. պատուհանի ապակուն արտացոլվում էր գրասեղանի լամպի լույսով ողողված իմ դեմքը: Խաղաղ ու հանդարտ օրեր էին, կարգ ու կանոնով լի օրեր, թեև իմ ներսում ու արտաքին աշխարհում ամեն ինչ հախուռն էր ու քաոտիկ: Հատկապես իմ ներսում էր ամեն բան եռում:

Ժամանակին, երբ դեռ չէի սկսել գրել, մաթեմատիկան էր սանձում իմ տագնապները: Այսօր էլ է երբեմն պատահում, որ արթնանալուն պես սկսում եմ հաշվումներ անել և թվերի հաջորդականություններ կառուցել: Ուրեմն ինչ-որ բան այն չէ: Ենթադրում եմ, որ այս ամենի պատճառով ձանձրալի մարդու տպավորություն եմ թողնում: Հոգ չէ: Եվ կարելի է ասել, որ ստանձնում եմ դրա պատճառած շփոթմունքը: Բայց այսօր, ըստ ամենայնի, հենց մաթեմատիկան, տաղտկալի թվերի սիրահարների մաթեմատիկան է օգնում հասկանալ, թե ինչ է կատարվում, և չտրվել զգացմունքներին:

Համաձարակները նախ մաթեմատիկական արտակարգ իրավիճակներ են և հետո միայն առողջապահական: Բանն այն է, որ մաթեմատիկան իրականում գիտություն է ոչ թվերի մասին, այլ հարաբերությունների: Այն նկարագրում է տարբեր սուբյեկտների միջև եղած կապերն ու փոխանակումներն անկախ նրանից, թե ինչ են այդ սուբյեկտները՝ տառեր, ֆունկցիաներ, վեկտորներ, կետեր և մակերեսներ:

Վարակումը համարժեք է մեր հարաբերությունների վարակմանը:

BookMark



Bookmark

3

Վարակի մաթեմատիկան

BookMark